

ԳՐԱԲԱՐԻ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱԹԻ ԱՌՆՁՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղարաբաղի բարբառը հայ ամենամեծ ու տարածված բարբառներից մեկն է: Այդ բարբառով խոսող բնակչությունը կենտրոնացված է ԱՍՍՀ լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, ՀՍՍՀ Գորիսի, Ղափանի և Սիսիանի, Վրացական ՍՍՀ Բուխիս Խաչենի շրջաններում: Աղբյուրների այլ հայաշատ վայրերի, Միջին Ասիայի հայության մեծ մասի մայրենի լեզուն դարձյալ Ղարաբաղի բարբառն է¹:

Բարբառի վերաբերյալ կան մի շարք ուսումնասիրություններ, որտեղ հիմնականում քննված են նրա ձևաբանական առանձնահատկությունները, այս կամ այն խոսվածքի կամ ենթաբարբառի բարբառային միավոր լինելու հարցը²:

Բարբառի բառային կազմի, բառապաշարի շերտերի, բարբառի ծագման ժամանակաշրջանի հետ կապվող հարցերին ցայժմ բավարար ուշադրություն չի դարձվել: Դա մասամբ բխում է այն տեսակետից, թե իբր, մինչև IX—XII դդ. Արցախը հայկական բնակչություն չուներ³: Եթե այդպես լիներ, ապա անտրամաբանական կլիներ խոսել ավելի վաղ շրջանում այդ տարածքում հայ բարբառի (կամ այս դեպքում՝ այդ վայրի հայախոս լինելու) հարցի մասին:

Մեր հիմնական նպատակը պատմական փաստերի քննությունը չէ, այլ բարբառի լեզվական որոշ իրողությունների բացահայտումը, որն իր հերթին կարող է լրացուցիչ փաստարկ ծառայել պատմագիտական այս կամ այն տեսակետի հիմնավորման համար:

Ղարաբաղի բարբառում շատ կան գրաբարի հետքեր: Հենց միայն բառապաշարը շատ բան կարող է ասել⁴: Ահա բարբառում օգտագործվող գրաբարյան բաղմամբիվ բառերից մի քանիսը. ակն, աղագ (ճանապարհ), բառնալ, բլշառնալ, բոլոր (կտր), բոյլ (գունդ), գիջ (խոնավ), գիլ, գառ, էր, րաթուլ (կենդանու առջևի ոտք), րակն, րափուր, թումբ, խաւար, խոզան

¹ Վերջին ժամանակներս առանձնացվել են Հադրութի, Գորիսի բարբառները: Այստեղ Ղարաբաղի բարբառ անվան տակ ի նկատի ունենք բուն լեռնային Ղարաբաղի բարբառը (հիմնականում ՈւՄ ճյուղի հատվածը): Եվ եթե որոշ դեպքերում վկայակոչվեն պատմական Արցախ-Սյունիքի այլ բարբառներ, ապա դա սկզբունքի խախտում չպետք է համարել, քանի որ հոգևածում քննվում են պրաբար-բարբառ առնչությունները, որոնք առկա են նաև այդ տարածքի բոլոր բարբառներում:

² Հ. ր. Աճառյան, Քննություն Ղարաբաղի բարբառի, Վաղարշապատ, 1901: Ա. Ղարիբյան, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, Ռեբանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հատ. 11, 1939: Գ. Դավթյան, լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966: Ա. Պողոսյան, Հադրութի բարբառը, Երևան, 1965: Ա. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975:

³ Հ. ր. Աճառյան, Հայրց լեզվի պատմություն, հատ. 2, Երևան, 1951, էջ 132, 380:

⁴ Ա. Մարգարյանի հաշվումներով, գրաբարում ավանդված բառերի թիվը Գորիսի բարբառում մոտ 3000 է (տե՛ս Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 238):

(չհերկված, անվար մնացած արտ), խուսք, կառարար (բույս), կեմ (խոտե պարան), կոծ, կոյս (կողմ), հազագ (շունչ), հանգիստ (գերեզման), մարի, մուն (միջատ), նիգ, շինամէջ, սամիթ, սերեկ (կաշվե կափարիչ), վարս, տուտն, տտիսլ, փոկ (կաշվե թել), քոնց: Կա՞ն բազմիմաստության, իմաստափոխության հետաքրքիր իրադրություններ:

Անցնենք բառերի քննությանը, անհրաժեշտության դեպքում բերելով օրինակներ գրաբարից և բարբառից: Սկզբում կնշենք գրաբարյան բառը կամ արմատը՝ դիմացը բառի բարբառային արտասանությունը⁵, չափերտներում կնշվեն որոշ բառիմաստներ: Հիմնականում կառանձնացնենք այն բառերը և իմաստները, որոնք արդի հայերենում չեն գործածվում կամ հաճախական չեն:

ԱՐԴ—արմատից, որից գրաբարում կազմում են մի շարք բառեր, բարբառը ունի արքակ «ամբողջովին, լիովին»: Այս կազմությունը և իմաստը գրաբարում ավանդված չէ:

ԲԾԻԾ—պրծէզնը (բարբառը ունի նաև բայական ձևը՝ պրծըզնիլ, պրծըզնած):

ԳՈՌ—գյուռ, «հպարտ, շեն»:

ԹԱՌԱՆԶ—«հոգոց»:

ԹՈՒՄԲ—«հողաբլուր». Ավերեաց գթումբս գետոց (ՆՀԲ): Նույն իմաստով շատ գործածական է բարբառում:

ԼԱՂՄ(Ն)—Աճառյանը իր «Հայերէն նոր բառեր Անկանոն գրոց մեջ» բերում է այս բառի վկայությունը՝ «Փորեցին լաղմ ծածուկ և թագուցին անդ...», համարելով այն փոխառություն թուրքերենից, լաղմ՝ ական: Այդպես մեկնված է ՀԼՊ-ում (հատ. 2, էջ 280) և «Արմատական բառարանում»: Մեր կարծիքով լաղմ-ը թուրքերենից փոխառված չէ: Այդ բառի վկայությունը ավելի հին է (չին կտակարան): Ղարաբաղի բարբառում շատ գործածական է և նշանակում է «փորվածք, հանդակ, երկու հորերը իրար հետ միացնող հորիզոնական կտրվածք»: Հենց այդ իմաստներն են արտահայտված նաև գրաբարյան օրինակում: Հավանորեն ճիշտ ձևն էլ պետք է լինի *լաղմն, քանի որ որպես կանոն գրաբարյան վերջնահանգ ն-ն, որը չկա արդի հայերենում, բարբառը հարազատորեն պահել է:

ԽԱՂ—գրաբարում և բարբառում ունի նաև ճոճ իմաստը:

ԽԱՆԶՈՂ—ըստ ՆՀԲ-ի կիսավառված փայտ: Այդ նույն իմաստով գործածվում է և բարբառում:

ԿԵՂ—ըստ ՆՀԲ-ի մարմնի վրա երևացող հոծ սպի: Արդի հայերենում հանդես է գալիս միայն բարդության մեջ: Բարբառում առանձին կիրառություն ունի և նշանակում է «վերքի փառ»:

ԿԷՍ—գրաբարում նշանակում է ոչ թե մի բանի կես, այլ՝ մի մասը. նույնը և բարբառում:

ԿԾՈՒ—«բարկ, թթու». բարբառում կա նաև դերբայական ձևը՝ կծուած, կծըվել:

ԿԼԱՓ—«ստորին ծնոտը». Մարդ և ձի զներքին կլափն շարժեն (ՆՀԲ): Բարբառում՝ կլափէն տալ «բերանը բաց ու խուփ անել» (քաղցած ժամանակ):

ԿՈՐԻ-ԿՈՐԵ—ըստ Արմ-ի «արտը ջրելու համար մեծ առվից բացված

⁵ Արտասանական տարբերություններ չլինելու դեպքում, բնականաբար, վերջինները չեն նշվի:

երկրորդական և նեղ ջրանցք»։ Վկայակոչված է Բուղանդից՝ «Կորի մի գետին»։ ՆՀԲ-ն նշում է նաև «ակոսի չափ» բացատրությունը։ Բուղանդից քաղված օրինակում, որն ըստ երևույթին հնագույնն է, կորի-ն ունի հենց ՆՀԲ-ի նշած իմաստը։ Բարբառում կորլ, ունի «ակոսի չափ, վարի չափ» իմաստները. հսօր մին կորէ վէր վար անինք...։ Կարելի է կարծել, որ բառը սկզբնապես ունեցել է հենց չափ՝ տարածական իմաստով (այդ իմաստն է պահել հնագույն վկայությունը և բարբառը)։

ՀԱՅՍ—հաս «քաղցրով, յուղով շաղախված խմոր, գաթայի միջուկը»։

ՃԵՊ—արմատը բարբառը պահել է ըշկընիպի «ակնթարթ» բառում։

ՀԱՆԳ—արմատից գրաբարում ունենք հանգոյն «նման, պես, նմանապես, նույնություն» բառերը։ Բարբառում այդ արմատն ենք գտնում հանգերն անել, «նմանակել» հարադրության մեջ։

ՃԻՃԻ—ոչ թե ճիճու։

ՇԱՆԱՃԱՆՃ—շրնաճանջ։ Բառը է. Աղայանը համարում է բարբառային. նշենք սակայն, որ այն վկայված է Աստվածաշնչում. եւ լցցին տունք շանաճանճիւ (Ելից, Ը. 21)։

ՅՈՅԼ, ՅՈՒԼԻ-ՈՒԼԻ—«ծուլ»։ Բարբառը ծուլանալ չի օգտագործում, այլ ուլանալ, որը դարձյալ գրաբարի յուլանալն է։

ՍԱՌՆ—բարբառում նշանակում է սառույց։ Այդ իմաստը խորթ չէ նաև գրաբարին. նման սպիտակութեան առիւն (Յայտ., Դ, 6)։ Սառն է յուղվութին ջրոյ պաղեալ ի պարզոյ և եղեամն ցող թերասառույց (ՆՀԲ)։ Բարբառը սառը ջուր կապակցության փոխարեն օգտագործում է ցուրտ ջուր. Մին աման ցօրտ ճուր պէր խըմինք։ Այդ կիրառության ակունքները դարձյալ գտնվում են գրաբարում։ Ահա օրինակներ դասական շրջանից. Որպէս ջուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է (Առակ., ԻԵ, 25)։ Եղեւ ինձ իբրեւ զջուր ցուրտ (Յովբ., ՀԵ, 9)։ Բաժակ մի ցուրտ ջուր միայն (Մաթ., Ժ, 42)։

Բարբառում վէր նշանակում է «հոր»։ Ճիշտ է, եւ կապակցությունը բառասկզբում փակ վանկով բառերում դառնում է վրօ, վրէ || վր, իսկ որոշ բառերում էլ մնում է հօճ, բայց վէր-ը կարելի է կապել գրաբարյան վիրապ բառի հետ։

Բարբառը հիմնականում անփոփոխ է պահել գրաբարում գործածվող բույսերի անունները։ Բերենք մի քանի օրինակներ. բանգի, կապար (փշոտ, գետնատարած բույս. capparatus), ջրկոտեմնը, ցրդնի, ջրջրուկ (ճճոսկ)։ Բարբառը ունի սրզնը - *սէզն բառը, որը ավանդված չէ գրաբարի բառարաններում։ (Չպետք է շփոթել սէզի հետ, որտեղից էլ արդի հայերենի սիզախտը)։ Սէզն կարմիր պտուղ է, որը աճում է ոչ բարձր թփերի վրա։ Այստեղից էլ՝ սրզնի, հմմտ. տանձի, խնձորի, ծիրանի և այլն։

Գրաբարի թվականների համակարգից բարբառը պահել է մին (ոչ թե մեկ) և չորհ (չորս ձևի հետ միասին) քանակական թվականները։ Հարազատորեն են պահպանված գրաբարի, այսպես կոչված, անձներական թվականները (երկոքեան, երեքեան, չորեքեան, բարբառում՝ ըրկոքան, իրեքան, չուրեքան... և այլն)։ Սրանք ցույց տալով առարկաների քանակը, արտահայ-

կամ բաղադրյալ ձևերի փոխարեն բարբառը ունի երբեմն արմատական ձևեր՝ շուրջ-շուռ, ճառադայթ-ճըռաքիլ, ճմլկլ-ճմկլ⁸։

ԿՈԿԵՄ—«տափակացնել, փափկացնել»։ բարբառը ունի նաև կոկած, կոկլեդ՝ ձևերը։

ԿՈՒՏԵՄ- կոտիւմ—«դիզել, կույտ դարձնել»։ Կուտել քարինս կամ կարկառ մեծ ի վերայ... (ՆՀԲ), բրբռ.՝ քարերը կոտիւլ և այլն։ Կան նաև դերբայական ձևերը։ Ինչպես և զրաբարում գործածվում է կուտակ (կոտակ) գոյականը՝ «կույտ, դեզ»։

ՋՐԹՎՓԵՄ—«արբունքի հասնել»։ Ծնաւ ուստր մի և իբրեւ ջրթափեաց... (ՆՀԲ)։ Նույն նշանակությունն ունի նաև Ղարաբաղի բարբառում. Խոխան վէր ճիւրիքափվի, պահելը կըհիշտանա։

ՎԱՍՏԱԿԵՄ, ՎԱՍՏԱԿԻՄ—գրաբարում բացի «դատել, աշխատել, շահ ձեռք բերել» իմաստից (որը պահել է և արդի հայերենը), այդ բառն ունի նաև «հոգնել» իմաստը։ Բարբառը բառը գործածում է միայն վերջին իմաստով. ավելին, այդ գործածությամբ է հանդես գալիս և վաստակ բառը. Յոռուդ, վաստակ տօն եկավ. «հոգնած, ջարդված տուն եկավ», որը կա նաև զրաբարում։

ՎԻՐԱԼ—«սափրել, ածիլել» վիր արմատը կարելի է տեսնել վէր աճել «սափրել» բայական հարադրության մեջ։

ՔԱՅԼԵՄ—«քալել նշանակելու համար զրաբար գնամ կըգործածուի,— նկատում է Թոռնյանը,— իսկ քայլել՝ շատ ցանցառ»⁹։ Բարբառում նույնպես քայլել-ի փոխարեն հաճախական է ի՜յինալ (գնալ) բայը։

ՔԹՈՒԵՄ—«փնտրել, քաղել, ոջիլներից մաքրել»։ նույնը և բարբառում։ Կիրառվում է նաև քրքովքրքով աճել ձևը։

Որոշ բայեր ունեն իմաստային բազմաբնույթ կիրառություններ։ Լեզվական այս իրողությունը դարձյալ առնչվում է զրաբարի հետ։ Այսպես, օրինակ, ածեմ բայը զրաբարում ունի մեկ տասնյակից ավելի իմաստային նրբերանգներ, որոնք համարյա նույնությամբ առկա են և Ղարաբաղի բարբառում։ Այդպես է և ունիմ բայը «ունենալ, բռնել, վերցնել, տիրել» և այլն։ Նշենք, որ ունիմ բայի զրաբարյան անցյալ կատարյալը՝ կալալ պահում է բարբառը՝ (ինք ըմ օնում «առնում եմ», բայց՝ ինք կալի «առա»)։ Գրաբարի խոնարհման հետքերը կան նաև ունիմ բայի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերում։

Անցյալ կատարյալ			
Գրաբար		Բարբառ	
կալայ	կալաք	կալի	կալինք
կալար	կալայք	կալիր	կալիք
կալաւ	կալան	կալավ	կալին(ան)
Բուն հրամայական			
կա՛լ կամ կա՛ւ	կալա՛յք կամ կալարո՛ւք	կա՛լ կամ կա՛ւ	կալիք՝ ¹⁰

8 Այս 3 բառերը բերված են Գ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» գրքից (Երևան, 1972, էջ 281—282)։

9 Բ. Թոռնյան, Ընտիր ընթերցվածք, հատ. I, Վիիննա, 1891, էջ 320։

10 Հրամայականի կալ ձևը բարբառում օգտագործվում է հիմնականում հարադրության մեջ՝ ինք կալ, -յէր կալ, իսկ կա՛ ձևը՝ առանձին։

10 Հանդես, № 1

Այս օրինակներում փաստորեն նշվեց նաև դրաբարյան քերականական որոշ ձևերի առկայությունը բարբառում: Բայական համակարգից կարելի է նշել նաև *ի-ով* առաջինի առկայությունը բարբառում. ըսելի պէն «ասելու բան», կիրիլի «գրելու», ուտելի «ուտելու» և այլն: Ճիշտ է, այդ ձևերը կարելի է համարել անորոշ դերբայի սեռական հոլով, սակայն որոշ գեպքերում ավելի հստակ է դերբայական-ժամանակային՝ քան հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունը: Լուսնամ բայի բուն հրամայականը (եղակի երկրորդ դեմք) բարբառում պահում է անցյալ կատարյալի Ց-ն՝ լվաց:

Հոլովման համակարգում բարբառային որոշ ձևեր հարազատ են գրաբարին, այդ վերաբերում է հատկապես *Ժ-ով* կազմված (հոգնակիություն արտահայտող) բառերին. հմմտ. տղերք, ըխճրկերք-տըղօրանց, ըխճրկօրանց և այլն: Ուի հոլովման հետքերն է մնացել ձագ-ծէգ բառում՝ ծէգուց մէղր կապակցության մեջ: Ակնհայտ է նմանությունը տէր-տեառն, տար-տըռնը (տըռնանը) ձևերի մեջ: Վերը նշել ենք նաև անձներական թվականների հոլովման ընդհանրությունները:

Ինչպես հայտնի է, թեքական լեզուներում ավելի ուժեղ է բաղադրիչների ձուլման աստիճանը և երկրորդ՝ մեկ վերջավորությունը կարող է արտահայտել մի քանի իմաստ: Այսպես, գրաբարյան «մարց», «մայրերի» ձևի ց-ն արտահայտում է հոլովը (սեռական-տրական) և թիվը (հոգնակի), ինչպես հնդեվրոպականում *mātr-ōm¹¹.

Եթե մի շարք բարբառներում հանդիպում ենք մերեր-ու, մարեր-ու ձևին, ապա Ղարաբաղի բարբառը օգտագործում է մորանց ձևը: Եվ այս ց-ն ունի գրաբարյան ց-ի բոլոր նշված հատկությունները (այդպես և՛ ախօրց, քվօրց, հարանց և շատ այլ բառերի մեջ): Նշենք, որ աւբ-օբ հոգնակի գործիականի կարելի է հանդիպել աշուք (աշօք), ծէռուք (ծեռաւք) և մի շարք այլ բառերում: Գրաբարի, այսպես կոչված, պարառական հոլովը՝ զ+ գործիական հոլով կազմությամբ, արտահայտում էր շուրջը, մի բանի շուրջը գաղափարը՝ նշված հոլովը կազմությամբ և արտահայտած իմաստով հետքեր է թողել նաև բարբառում. հմմտ. զիրավ ածէլ «փաթաթել», զիրավ տըռնալ «մի բանի շուրջը հավաքվել, շրջապատել» և այլն:

Բարբառում կան նաև գրաբարի նախդիրների գործածության հետքերը, գրանցից ր-ն (երբեմն էլ փոխվելով ը-ի) պահվել է բարդությունների մեջ. հմմտ. պըրտոյէր, պըրտոյվէր, «պորտ ի վեր, պորտ ի վայր»: Այդ բառերը գործածական էին գրաբարում. Պարզեաց ղինքն պորտ ի վեր վասն ցաւոյն (ՆՀԲ): Բայց ահա հայերենին բնորոշ որոշ կազմություններ հաճախական լինելով բարբառում, սակավադեպ են հանդիպում գրաբարում. ինչպես՝ կըլիւրյէր, կըլիւրվէր, «գլուխ ի վեր, գլուխ ի վայր», պըրտըտուս «պորտ ի դուրս», վընըծուց «ոտ ի ծոց», առ-ը պահել է առ իս (նմանությամբ նաև առ իդ) ձևերում: Որոշ բառեր պահել են հայական հոլովի ս-ն՝ խաղս (լինել) և այլն:

Արդի հայերենում մի շարք բառեր (ծուկ, մուկ, կաթ, նուռ, դառ, եղ, դուռ, բեռ, թոռ և այլն) գրաբարում ունեցել են ն (ծուկն, մուկն...): Ղարա-

11 Դ. Ջառուկյան, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 306:

բաղի բարբառը հարազատորեն է պահել և այդ ձևերը: Պրոֆ. Աճառյանը այդ առթիվ գրում է. «Այս բարբառների մեջ (իմա, որոնք պահել են գրաբարյան վերջնահանգ ն-ն—լ. Հ.) կա սակայն մի ուրիշ երևույթ էլ: Հաճախ գրաբարը չունի զոյականի ծայրին ն, մինչդեռ բարբառներն ունեն»¹²: Դրանք կարող են լինել և համաբանության ազդեցություն: Նկատենք նաև, որ Աճառյանի բերած նման բառերի մի մասը Ղարաբաղի բարբառում հանդես են գալիս կամ առանց ն-ի, կամ երկու տարբերակով էլ, ֆինչպես մամուռ, խէժ, թուղ (թողնը կամ թող), զկեռ, հակ (հակնը կամ հակ) և այլն:

Ինչպես նշում է Մ. Մուրադյանը¹³, գրաբարում իմաստային որոշակի խմբերի պատկանող (բույսերի, կենդանիների անուններ) մի շարք բառերում ն-ն կարող էր դրվել կամ չդրվել: Բարբառում նկատվող այդ երևույթն էլ ոչ թե բարբառային նորամուծություն է, այլ հնուց եկող օրինաչափության արտահայտություն: Հնարավոր է նաև, որ բարբառում ն ունեցող որոշ բառեր, որոնք գրաբարը պահել է առանց ն-ի, իրենցից ներկայացնում են հայերենի տվյալ բառի ավելի հնագույն տարբերակը, որը գրաբարը չի պահել¹⁴: Իսկ նման օրինակներ (ոչ այդ կարգի բառերից) կարելի է նշել: Այսպես, գրաբարի գգնուլ բառի դիմաց բարբառը ունի կենալ: Դեմ արմատով գրաբարը գործածություն չունի, այլ միայն գ-ի հետ: Բարբառն ունի կենամ, կեցե, կեց (Գ>Կ հնչյունափոխությունը օրինաչափ է), իսկ այդ գեն-ը ավելի հին է և համապատասխանում է հնդեվրոպական *vel* արմատին: Բացառված չէ նման գործածությունը և գրաբարում, որը սակայն մեզ չի ավանդվել:

Բնականաբար, դժվար է մատնանշել գրաբարի շարահյուսության հետքերը բարբառում, սակայն եզակի օրինակներ կարելի է գտնել. այսպես, բարբառում հաբցանել, խնդրել բայերը խնդիր են առնում միայն ու միայն բացառական հոլովով: Հիշենք, որ նման խնդրառությունը խորթ չէ գրաբարին:

Բարբառը պահել է գրաբարյան բազմաթիվ ոճեր (իրենց իմաստներով): Ահա մի քանի օրինակներ.

Գրաբար	Բարբառ
անցանել ընդ քուն	լընավ ընցընել
անկանել յուղի	հդէ ընգնել
անկանել ի մտաց	մըննան (մըտան) ընգնել
աչք ածել	աչք ածել (չորս կողմը նայել, փնտրել)
կալ աչաց	աչքերը կալվիլ (կուրանալ)
յոտն կաց	վընը (վըտը) կաց
յոտաց	վըտեց (ոտքի վրա)

Բազմաթիվ ու բազմաբնույթ քերականական այս առնչություններից կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Այդ առնչությունը վկայում է այն մասին, որ մերժելի պետք է

¹² Հ. ր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. 2, էջ 416:

¹³ Տե՛ս «Հայոց լեզվի պատմական քերականություն», հատ. 2, Երևան, 1975, էջ 10:

¹⁴ Հատ Գ. Զահուկյանի այդ ն-ն կարելի է ընդունել որպես հին հայցականի մնացորդ («Հայ բարբառագիտության ներածություն», էջ 230):

Համարել այն տեսակետը, ըստ որի Արցախի բնակչությունը հայախոս է դարձել IX—XII դդ. և հետևաբար՝ բարբառի ծագման ժամանակաշրջանն էլ այդ դարերի հետ կապելը: Նշված դարերում գրաբարը իր տեղը զիջում էր միջին հայերենին, այն արդեն խոսակցական լեզու չէր և չէր կարող այդքան մեծ ազդեցություն ունենալ «կարծեցյալ» այլ լեզուների վրա: Տրամաբանական չէ, երբ չգործածվող ու գրքային լեզուն դառնա ժողովրդի մի այլ հատվածի խոսակցական լեզու:

2. Կարելի է ընդունել V դարում Ղարաբաղի բարբառի գոյությունը, հիշելուով պրոֆ. Գ. Զահուկյանի այն դիտողությունը, թե հայերենի ոչ մի բարբառ որևէ դարաշրջանում իր բոլոր գծերով կազմավորված հանդես չի եկել և չէր էլ կարող հանդես գալ, և որ մինչև IX—XII դդ. հայ բարբառների տարբերությունները գերազանցապես հնչյունական, բառապաշարային էին¹⁵:

Մեզ թվում է, Ղարաբաղի բարբառի որոշ փաստեր կարելի է համարել հնագույն բարբառային արտահայտություններ: Դրանք կարող են լինել երկու տեսակ՝ ա. գրաբարում ավանդված զուգահեռ ձևերից մեկի առկայությունը, բ. գրաբարում չավանդված հնդեվրոպական կամ հին բարբառային արտահայտություններ: Այսպես, գրաբարյան ալ-ի դիմաց որոշ բարբառներ ունեն է, Ղարաբաղի բարբառը՝ հիմնականում ա (կամ օ): Թյուրիմացություն կլինի կարծել, թե Ղարաբաղի բարբառը ալ> է չունի: Ունի, այո, բայց հենց նման հնչյունափոխության կողքին ալ>ա-ի առկայությունը, ըստ երևույթին, ավելի հին է, որովհետև ա. գրաբարյան ալ-ի դիմաց Ղարաբաղի բարբառը պահել է ա այն բառերում, որոնք հիմնականում հին են (բնիկ). համտ, հայր-հար, մայր-մար և այլն (ունենք նաև մի հետաքրքիր օրինակ. գրաբարի հայս բառը, «քաղցրով հունցած խմոր, միջուկ» բարբառը դարձյալ պահել է հաս ձևով), բ. ինչպես ցույց են տալիս փաստերը, և ունենք այնտեղ, որտեղ կատարվել է ձայնեղների խլացում: Դա վերաբերում է հիմնականում նաև ալ երկբարբառ ունեցող բառերին (համտ. բան-պէն, բարձր-պէցիր, դանակ-տէնակ, ձախ-ծէխ, այլև՝ ձայն-ծէն և այլն): Իսկ, ընդհանրապես, այն բառերում, որտեղ բաղաձայնների տեղաշարժ չի կատարվել, այսինքն, որոնք ավելի հարադատ են գրաբարյան ձևերին, բարբառը ալ-ի փոխարեն անխտիր ունի ա (օ). համտ. հայր-հար, մայր-մար, մայրի-մարի, վայր-վար, փայտ-փառ և այլն): Պարզ է մի բան. ա>է-ն բարբառում կատարվել է գրաբարյան ձայնեղների խլացումից հետո, կամ նրան զուգահեռ: Բոլոր դեպքերում այն հետագա շրջանի երևույթ է (բարբառում ձայնեղների խլացումն ավարտվել է IX—XII դդ.)¹⁶:

Ուրեմն գրաբարյան ալ-ի դիմաց բարբառում ա(օ)-ի առկայությունը պետք է դիտել կա՛մ՝ որպես ալ-ին զուգահեռ ձևեր (տվյալ դեպքում ա-ով ձևերը՝ բարբառային տարբերակներ են), կա՛մ եթե բարբառի ա(օ)-ն գրաբարյան ալ երկհնչյունի պարզեցման արդյունքն է, ապա, բնականաբար, ալ>ա-ն նախորդել է ալ>է-ին (վերջինս անշուշտ անցել է ալ>ա(օ)> է փուլերը):

¹⁵ Գ. Զահուկյան. Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը:

¹⁶ Է. Աղաջան, Բարբառային հնագույն տարբերակներ հայերենում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 5, էջ 73—74:

Այս դեպքում նույնպես զրաբարյան ալ-ի փոխարեն բարբառում ալ է ձևերից հինը ա-ն է:

Քանի որ հնչյունական օրինաչափ փոփոխությունները կարճ ժամանակամիջոցում չեն կատարվում, ապա դարձյալ ա-ով ձևերը կդիտվեն որպես բարբառային հին տարբերակ (է-ով ձևերի համեմատությամբ):

Բարբառային-տարածքային տարբերակ կարելի է դիտել նաև բարբառում հաճախական նաւ-ով կաղմությունները զրաբարյան նաւկ-ով կաղմությունների դիմաց, աւմանալ-ը զաւմանալ-ի փոխարեն և այլն: Եթե այս կարելի է ընդունել վերապահությամբ, ապա վերը նշված սառն, ցուրտ բառերը «սառնամանիք և սառն» իմաստներով, անշուշտ բարբառային իրողություններ են՝ ավանդված հենց զրական լեզվում: Պրոֆ. է. Աղայանը հնագույն բարբառային տարբերակ է համարում բարբառի քրվոր, քվեր ձևերը. «Գրաբարյան քեռ և բարբառային քուոր, քուեր ձևերը զուգահեռ ձևեր են, որոնք բոլորն էլ հնդեվրոպական swesor բառի սեռականից են ծագում՝ ձայնդարձի տարբեր աստիճաններով և ներկայացնում են հին հայերենի բարբառային տարբեր ձևերի շարունակությունը»¹⁷: Կան պատմական տեղեկություններ էլ, որոնք հաստատում են Արցախ-Սյունիք տարածքում բարբառի վաղ շրջանի գոյության մասին: Հիշենք միայն մեկը՝ VII—VIII դդ. պատմիչ Ստ. Սյունեցու վկայությունը. «Եւ դարձեալ զքո լեզուիդ դիտելն զբովանդակ բառսն զեղերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽոթայինն և զԶորրորդ հայեցին և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինն. այլ մի միայն զմիջերկրեայսն և զոստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են այլև աւգտակարք ի պատմութիւնսն, զի մի վրիպեսցի անընդել գոլով լեզուացն»¹⁸:

Քանի որ այս փաստարկները ուսումնասիրողների կողմից տարբեր մեկնաբանություններ են ստացել՝ հօդուտ վաղ շրջանում բարբառի գոյության կամ հակառակը, կանգ առնենք Սյունեցու վկայության մի կետի վրա: Ինչպես նկատում է պրոֆ. Հր. Աճառյանը, Սյունեցին նշում է երեք կարգի լեզուների իմացություն՝ հարևան ժողովուրդների, հին լեզուների և «զքո լեզուիդ զբառսն եղերականս»:

Առաջին երկուսը ինքնուստինքյան հասկանալի են, իսկ երրորդը ստացել է տարբեր մեկնություններ. ոմանք այն մեկնում են որպես հայերենի բարբառների ուսումնասիրության անհրաժեշտություն, իսկ ուրիշները՝ ընդունելով, որ այդ ժամանակաշրջանում հայերենը բարբառներ չունեի, «զբառսն եղերականս» դիտում են որպես Հայաստանում ապրող օտար ցեղերի լեզուներ: Այդ առիթով պրոֆ. Ա. Ղարիբջանը իրավացիորեն գրում է. «Փորձում են կասկածի տակ առնել Ստեփանոս Սյունեցու վկայությունը եղերական բարբառների մասին, ենթադրելով, թե դրանք ոչ թե բարբառներ են, այլ անկախ լեզուներ: Բայց Սյունեցին ուղղակի ասում է, որ դրանք բարբառներ են իր հետևյալ կապակցությամբ «զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն զեղերականս»¹⁹:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Н. Адонц, Диопсний Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

էջ 187:

¹⁹ Ա. Ղարիբջան Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 31:

Այս տեսակետը չընդունողները կարող են առարկել (և առարկում են) թե՛ քանի որ հնում հստակ տարբերակում չկար լեզու-բառ-բարբառ բառերի միջև, ապա վերոգրյալ հատվածում զբառսն նշանակում է ոչ թե բարբառները, այլ՝ լեզուները։ Այդ դեպքում զբառս-ի բարբառ թե լեզու լինելը մի կողմ թողնենք և անցնենք Սյունեցու վկայության արամաբանական վերլուծությանը։ Եթե Սյունեցին ի նկատի ունենար իրոք ուրիշ լեզուները, ապա «զբառսն՝ զեզերականս»-ը չէր առանձնացնի. դրանք, բնականաբար կ'մտնեին «հարեան ժողովուրդների լեզուների մեջ», երկրորդ՝ երբ հայերենն արդեն այդ տարածքում համընդհանուր լեզու էր, ապա ոչ մի անհրաժեշտություն չկար (և Սյունեցին իր ժամանակին լավ էր ըմբռնել), որպեսզի հայերը սովորեին այլ ցեղերի լեզուները։ Այդ բազմաթիվ «օտար լեզուներ» սովորելը ոչ միայն անհրաժեշտ չէր, այլև այն ժամանակվա պայմաններում բոլորովին անհնար էր։

Հետևաբար, Սյունեցու «զբառսն եզերականս»-ը վերաբերում է հայ բարբառներին, որոնց իմացությունն անհրաժեշտության մասին խոսում է մեր պատմիչը։ Իսկ նրա վկայության մեջ մտնում էր Սյունիք-Արցախի բարբառը։ Եթե այս վկայությունը վերաբերում է VII—VIII դդ. (իսկ լեզվական-բարբառային փոփոխությունները կարճ ժամանակահատվածում չեն առաջանում), ապա հիմք ունենք պնդելու, որ ավելի վաղ շրջանից Արցախի լեզուն հայերենն էր, իսկ նկատվող տարբերություններն էլ կարելի է դիտել որպես բարբառային։

Որ իրոք Արցախը հայախոս է եղել վաղ ժամանակներից, վկայում է նաև բարբառում հնդեվրոպական բառերի առկայությունը (նաև այնպիսիները, որոնք նույնիսկ զրաբարում չկան)։ Այդպիսի տասնյակ բառեր են նշում Հր. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Ղարիբյանը, է. Աղայանը իրենց մի շարք ուսումնասիրություններում, նման տասնյակ բառեր կարելի է գտնել Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» գրքի վերջում բերված հնդեվրոպական-բարբառային բառերի ցանկում, նույն հեղինակի այլ աշխատություններում ու հոդվածներում։ Ահա մի քանի օրինակներ. Այա—հնդեվրոպական *ayia* «մայր, տատ», լոֆ տալ «ցատկել» — հնդեվ. *lok*, հուն. *lēkân*, «ցատկել», մորտել «կծել» — լատ. *mordeo*, ֆր. *mordre*, հայ. *mida*, պոլ. «չհանգած ածուխ» *(s)p(h)el*, հուն. *σπιγίζ*։ նման բառերից են նաև առոն, լոկ. սըղըմօղ, պլպլալ, սլկրհել և այլն։ Մուգ «մթնագույն» բառը, ըստ Գ. Ղափանցյանի, պահպանվել է միայն երկու բարբառում, այդ թվում և Ղարաբաղի բարբառում (հմմտ. *смугавий*, հնդեվ. *smugh*)²⁰։ է. Աղայանը ստուգաբանելով կից (կուց) բառը՝ *ger* արմատից *sko* մասնիկով, նշում է այդ բառի զույգ իմաստով գործածությունը հին մատենագրության մեջ և բարբառներում, իսկ հունարենում *σπινδύλ* «ձեռք, ձեռքի ակ»²¹։ Ուշագրավ է, որ Ղարաբաղի բարբառը կից/կուց օգտագործում է «ձեռքի ակ, բուռ» իմաստով։ Գրաբարյան ով, երբ, ինչ, ոյր դերանունների դիմաց բարբառը ունի հոյ, հիր, հինչ, հուր ձևերը։ Ըստ Հր. Աճառյանի այս հ-ն հնդեվրոպերենից մնացած հավելադիր է։ Կասկածելով, սակայն, որ այն կարող է զուտ բարբառային երևույթ լինել, նա բերում է մի շարք բառեր, որոնք հ չպիտի ունե-

²⁰ Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), 1961, Երևան, էջ 260։

²¹ է. Աղայան, Ստուգաբանություններ, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1971։

նային, բայց որոշ բարբառներում այն առկա է: Աճառյանի բերած մոտ 30 բառերից Վարաբարի բարբառում բոլորն էլ առանց հ-ի են, բացառությամբ ուղի-նղի բառի, որը մեր կարծիքով գրաբարյանի ուղի (յուղի) ձևն է: Բարբառում կան հին ձայնադարձի հետաքրքիր օրինակներ. գող-կէղել, բոռն-պէռնը, խաշ-խէշ(ակ): Վ > զ հնադույն փոփոխության օրինակ կարելի է տեսնել բարբառում ածականի գերադրական աստիճանի անուն ձևի մեջ (հմմտ. ավուն-ագոյն)²²: Եվ վերջապես, գրաբարում և բարբառում ֆ հնչյունը չլինելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ բարբառում շեշտակիր է վերջընթեր վանկը, խոսում է դարձյալ բարբառի և գրաբարի հին առնչությունների մասին:

Նկատենք, որ ելնելով որևէ բարբառում լեզվական փաստերի (նախագրաբարյան կամ գրաբարյան) առկայությունից, դեռևս չի կարելի վերջնական եզրակացություն անել աշխարհագրական տվյալ տարածքում այդ իրողությունների (հետևաբար և բարբառի) հնություն մասին: Հիշենք նոր նախիջևանի բարբառը, որը նույնպես ընդհանուր շատ բաներ ունի գրաբարի հետ, բայց թյուրիմացություն կլինի դրանք դիտել որպես այդ տարածքին բնորոշ լեզվական հին իրողություններ, որովհետև հանրահայտ ճշմարտություն է, որ մինչև XVIII դարը այդ շրջանում հայկական բնակչություն չկար:

Արցախ-Սյունիքի տարածքում հայախոս բնակչության կազմավորման ժամանակաշրջանի հարցին համառոտակի անդրադառնալը ինքնանպատակ չէ, այն անմիջականորեն առնչվում է մեր առջև դրված լեզվաբանական խնդրի հետ: Ըստ Լեոյի, Արտաշեսյանների «նվաճումների» շնորհիվ «հայացվեցին Գուգարքի մի մասը, Արցախը, Ուտին, Տայքը: Հավանական է համարվում, որ Սյունիքն էլ ամբողջովին հայացված մի աշխարհ էր»²³: Լեոյի երկերի ժողովածուի առաջին հատորի խմբագրական ծանոթություններում այն միտքն է զարգացվում, որ նշված և մի շարք այլ «ծայրագավառներում» հայկական տարրը կազմավորվել է ավելի վաղ²⁴: Իսկ Ստրաբոնը վկայում է, որ Արտաշեսյանների օրոք «ամբողջ աշխարհի (իմա՝ Հայաստանի—Լ. Հ.) բնակիչները համալեզու էին»²⁵, այսինքն՝ խոսում էին հայերեն: Պարզ է, որ տարբեր էթնիկական խմբերի դուր քաղաքական ու ռազմական միավորումը չէր կարող հանգեցնել միալեզվության: Հիշենք, որ Սելևկյան պետության մեջ մտնող նվաճված ժողովուրդները «համալեզու չդարձան», որովհետև այդ բանի համար պակասում էր հիմնականը՝ էթնիկական խմբերի և լեզուների ընդհանրությունը²⁶:

Պատմական և լեզվական նմանօրինակ փաստերը հավաստում են, որ Արցախ-Սյունիքում հայերենը սկսել է գործածվել հայ տարրերի կազմավորման ընթացքին ղուգահեռ: Այդ տարածքում գործածվող հայերենը բազում դարերի ընթացքում կրելով զգալի փոփոխություններ, մեզ է հասել մի վիճակով, որը կոչվում է Վարաբարի բարբառ:

²² Գերադրական աստիճանի բարբառային այդ ձևի մասին վկայում է Հր. Աճառյանը (տե՛ս «Հայոց լեզվի պատմություն», հատ. 2, էջ 156):

²³ Լեո, Հայոց պատմություն, հատ. 1, Երևան, 1966, էջ 334:

²⁴ Նույն տեղում, էջ 535, ծան. 50, էջ 537, ծան. 55:

²⁵ Հ. Հյուրշման, Հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907, էջ 28:

²⁶ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, Երևան, 1971, էջ 530:

К ВОПРОСУ О СВЯЗЯХ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА
И КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА

Л. Ш. АВАНЕСЯН

(Резюме)

В статье рассматривается лексическая и грамматическая (в основном морфологическая) общность грабара и карабахского диалекта. Отмеченные в статье факты отсутствуют или не частотны в современном армянском языке и относятся к раннему периоду истории древнеармянского языка. Рассматриваются также слова, имеющие древнеармянскую структуру, но не засвидетельствованные в грабаре. Приведенные данные дают основание предполагать о существовании карабахского диалекта гораздо ранее IX—XII вв.